

ԲԱՌԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ
ՊՈԼԻՆԵՔՆԱԿԱՆ ԼԵՁՈՒՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Լ. Գ. ՄՏԵՓԱՆՅԱՆ

Երկու (և կամ ավելի) լեզուների միջև նկատվող քառային ընդհանրությունները սովորաբար բացատրվում են մի քանի պատճառներով. միևնույն լեզվաընտանիքին պատկանելու իրողությամբ, ինչ-որ ժամանակ լեզվակիրների համակեցությամբ, նրանց անմիջական շփումներով կամ միջնորդավորված փոխառություններով: Այն զարմանալի ընդհանրությունները, որ նկատել ենք պոլինեզիական լեզուների և հայերենի հիմնական քառաֆոնդերի միջև, առայժմ դժվար է բացատրել վերոհիշյալ պատճառներից որևէ մեկով:

Պոլինեզիական լեզուների խումբը մելանեզիական, միկրոնեզիական և ինդոնեզական լեզվախմբերի հետ միասին կազմում է ավստրոնեզիական կամ մալայապոլինեզիական լեզվաընտանիքը, որը համեմատաբար քիչ է ուսումնասիրված: Պոլինեզիական լեզվախմբի լեզուներից են ֆաիթերենը, հավայերենը, մարկիզերենը, սամոա, սոնգա լեզուները, ռապանուերենը և այլն: Հայերենի հետ համեմատվող հիմնական լեզուն եղել է Ջատկի կղզու լեզուն՝ ռապանուերենը, հնարավոր դեպքերում համեմատվել են նաև հավայերեն, ֆաիթերեն տարբերակները: Համեմատություններ կատարելու համար օգտվել ենք Ի. Ֆյոդորովայի «Ջատկի կղզու առասպելներն ու լեզները» գրքից,¹ որտեղ, հին տեքստերի թարգմանություններից ու ծանոթագրություններից բացի, կա նաև բառարան, որն ընդգրկում է հին ձեռագրերի 6000 բառ և արտահայտություն (գլոսսա):

Ներկայացնում ենք հայերեն-պոլինեզերեն բառային ընդհանրություններից մի քանիսը:

1) *Թովել* – ըստ Հր. Աճառյանի, բառը ծագում է «հնլս. տս - «խոսիլ, կարդալ, արտասանել» արմատից, նախնական նշանակությունը եղել է «խոսել, շնչալ, ձայնել (մանավանդ ընդհառ-ընդհատ)»: Բերվում են սանսկր. *stu* «գովել, օրհնաբանել, գովասանքով խոսել, գովեստը երգել», *pra-stu* «խոսել, սկսել», *stotra, stoma* «գովասանք, գովասանական օրհներգություն», գնդ. *stav-*, *stu* «գովել, օրհնաբանել, աղոթել», *a-stu* «հանդիսավորապես խոստանալ» և այլ գուգահեռներ:²

Ռապանուերենում՝ *tohu* – 1) հմայախոսք, դյուրություն, դյուրում, կախարդել, հմայել 2) արտասանել, ոգել, հմայախոսք, *kahou tohu* – գուշակ, նախագուշակ, մարգարե; *tohu rivariva* – օրհնել, օրհնություն տալ, բարենմաղթել, *tohu rakerake* – անիծել, նզովել:

2) *Զար* – «ընկի հայ բառ, հնլս. *kar* – արմատից, «քար» «կարծր» իմաս-

¹ *И. К. Федорова*, Мифы и легенды острова Пасхи, Л., 1988.

² Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), Ե., 1973, հ. II, էջ 199: Տե՛ս նաև Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 154:

առվ»³, այստեղից էլ՝ քարաժայռ, քարայր, քարակոփ, քարկոծել ե այլ բառեր:

Ռապանուներեն՝ *karava* (*ka-rava*) - 1) քարայր, 2) խոռոչ, փոս, իջվածք, խորշ; *taratara* (*tara-tara*) - ժայռոտ (կամ, որ նույնն է, *քարքարոտ*): Նշենք, որ Ի. Ֆյոդորովան զարմամալիորեն չի նշում *t>k* անցումը, որը նկատել ենք բազմաթիվ պոլինեզներեն բառերում, ինչպիսիք են. Տու>Կու, Տանգսիլո>ա>Կանալոա (դիցանուններ), աապա>կապա, մատե>մակե, ատուա>ակուա: Եթե նկատի ունենանք այս անցումը, կստանանք՝ *taratara(t>k)>kara-kara* [քարքար (ոտ)]:

3) Հիժ - քնիկ հայ բառ՝ հնիս. *seno* ձևից, «հին, մաշած, հնացած, վաղեմի, հին ժամանակի»: Մանսկր. *sāna* - «հին», գնդ. *hane* «հին, ծեր», *hana* «ծեր կին», պիլ. *han*, լա. *sen-ex*, հյգ. *semen*, ծեր», *senior* «երիցագույն», լիտ. *sinas* «հին», հիւլ. *sen*, *sinin*:⁴

Ռապանուներեն՝ *hinihini* (*hini-hini*) - հեռավոր, վաղեմի, հնագույն; *hinahina* (*hina-hina*) - սպիտակահեր, *hina* - սպիտակ մազեր:

4) Թի - քնիկ հայ բառ՝ հնիս. *ptio* ձևից, «նավ վարելու կամ հող թափելու թի», «նավի թի»⁵, որից՝ թիակ, թիավարել և այլն:

Ռապանուներեն՝ *tiaki* (*ti-aki*) - ակոսել (ջրի ալիքները), երկարատև մավարկել; *tatia* (*tia-tia*) - հին մավակների հավասարակշռող լծակ, (ենթադրում ենք, որ այն երկկողմ է եղել (հավասարակշռելու համար), այդ պատճառով էլ բառը կազմված է արմատի կրկնությամբ (որը հոգնակի քվի կազմության հնագույն ձև է) և նշանակում է թիեր կամ թիակներ):

5) Թիռ - «թռիչ, թռչիլը», կամ «սաստիկ փափագ»: Մրանցից են կազմված *թռա*, *թռիր*, *թռուցեալ*, *բարձրաթիռ*, *թռանիլ*, *թռնուլ*, *թռչում*, *թռիչք*, *երկնաթռիչ* և այլ բառեր, «հնիս. *pter*-արմատից, որ կանոնավորապես տալիս է *թեր* (կամ *թեռ*) մեր ամենից մերձավոր ցեղակից ձևերն են յն. *πτερόν* «փետուր, թռչունի քև, ծառի ճյուղ կամ տերև», *πτερου* է՝ «թռչունի քև, թռիչ, թռչում, լողակ, հագուստի քև, սրի բերան, ծառի տերև»:⁶

Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը բառի հնդեվրոպական հիմքը համարում են **p^het^h* - ձևը և բերում հուն. *πετομαι* «թռչում եմ», հին հնդկ. *pātati* «նա թռչում է», լատ. *peto* «ձգտում եմ», իտ. *pittai* «վազել», «շտապել», «թռչել», ինչպես նաև «քև», «փետուր», «թռիչք» նշանակող հետևյալ ձևերը. իտ. *pattar*, սեռ. հոլ. *pattanas*, «քև», հուն. *πτερόν* «փետուր», «քև», հայ *tir* «թռիչք», հին հնդկ. *pataṛā* «թռչող», ավեստ. *pataṛθta* - «թռչող», հին. գերմ. *fedara* (գերմ. *Feder*) «փետուր», հին անգլ. *feder* (անգլ. *feather*), լատ. *penna* «փետուր», «քև»:⁷

Ռապանուներենում «թռչում» հասկացությունն արտահայտվում է *manu* բառով, ինչպես նաև *turi* (թիռ ?), *turi* (թե ?) և *turu* (ուրուր ?) տարբերակներով: Մրանցից բացի, կա նաև *manu uru* տարբերակ, որ նշանակում է ու-

³ ՀԱԲ, հ. IV, Ե., 1979, էջ 558:

⁴ ՀԱԲ, հ. III, Ե., 1977, էջ 94, Գ. Բ. Ջահուկյանը, ևս *հիժ*-ը համարում է ռնիկ հայ բառ (նշվ. աշխ., էջ 147):

⁵ ՀԱԲ, հ. II, էջ 181: Գ. Բ. Ջահուկյանը բառի մախաձևեր է համարում հնդ. **pet*, **peue*, **pte(u)* ձևերը (նշվ. աշխ., էջ 144):

⁶ ՀԱԲ, հ. II, էջ 184:

⁷ Դ. Բ. Գամկրելիձե, Եղ. Բ. Իվանով, *Индоевропейский язык и индоевропейцы*, Тбилиси, 1984, с. 224.

րուր, ցին (քառացի քերևս՝ թոչուն ուրուր):

6) *Թավ* - քնիկ հայ քառ՝ հնիւ. **teu-*, **tewə*, **tu-* ձևերից, նշանակում է «քանձր, խիա (ծառի, ամտառի համար ասված)»⁸, որտեղից՝ քավուտ (ծառաշատ տեղ), քավամագ, քավարծի և այլն: Մանսկր. *tu*, *taviti*, *tauti*, զնդ. *tav* «զորել, կարողանալ», *tavah* «կարողություն, ուժ», պրսկ. *tuvan* «ուժ, կարողություն», *tuvanistan* «ուժեղանալ, զորեղ, կարճանալ» և այլն:

Ռապանուներեն՝ *toutou (tou-tou)* - խիտ, փարթամ (ծառերի և բույսերի մասին): Իմաստային տեսակետից քառն ավելի մերձակից է հայերենին:

7) *Թեքել* - քնիկ հայ քառ՝ հնիւ. *tek* արմատից, «կռանելով կոկել, շինել, սրել», այնուհետև ստացել է «ծռել, դարձնել» նշանակությունը, «նոր գրականությունում նշանակում է միայն «ճկել, ծռել», որից թեք «ծուռ», թեքում, թեքական, դիրաթեք, թեքուիլ, թեքութիւն»⁹:

Ռապանուներեն *teka* - 1) ոլորվել, 2) շրջվել, շուռ գալ, պտույտ տալ (ճանապարհի մասին), *tekai (teka-i)* - 1) մատանի, 2) զանգուր, խոպոպ, 3) զնդակ, զուռն, *tekateka (teka-teka)* - ոլորվել, պատվել, *teketeke (teke-teke)*-կարճահասակ, կարճ, զանճ, (թեքված, կռացած), *teki* - հատվել (հայտնի է, որ հատվում են թեք ուղիները):

8) *Կին* - քառի նախաձևը *Թ*. Գամկրելիձեն և Վ. Իվանովը համարում են հնիւ. **keen*-արմատը, այլալեզու հոմանիշներն են. թոխ Ա. *sām*, թոխ Բ. *šana*, հին հնդկ. *jāni* «կին» (ցոճ «աստվածուհի», «աստծո կին»), ավեստ. *jaini*, պրսկ. *zan*, հայ. *kin*, զոք. *gino*, հին գերմ. *guena*, հին անգլ. *cwene*, հին իռլ. *ben*, *bē*, ալբ. *zōnjē*, պրուս. *genno*, հին սլավ. *žena* (բոլորը «կին» իմաստով)¹⁰:

Պոլիմեզիական լեզուներում «կին» քառն ունի մի քանի տարբերակներ՝ *vie*, *hine*, *vahine*, *hahine*, որոնց *hine* բաղադրիչը, մեր կարծիքով, առավել մոտ է հայերենին: Ասենք նաև, որ *kenu* նշանակում է ամուսին, իմաստավորություն, որ միանգամայն հնարավոր է մայրիշխանությունից հայրիշխանության անցման ժամանակ:

9) *Կատակ* քառի մասին ակադ. Գ. Ջահուկյանը գրում է. «Կատակ և հ. հնդկ. *gādātī* «ասում է, խոսում է», *gada-* «խոսք, զրույց, ասացվածք» քառերի համեմատությունը պատկանում է Լիդենին [Liden, 1906, 81] և ընդունվում է Աճառյանի կողմից: Հ. հնդկ. քառը Պոկորնին [Pok., 1, 480-481] քերում է **guet-* «խոսել» արմատի տակ՝ **t-*ի փոխարեն հին հնդկերենում *d-*ի առկայությունը համարելով երկրորդական: Մայրեռները [KEWA, 1, 319-320] չժխտելով սա և *gad-*ի *d-*ն համարելով *vad-*ի ազդեցության արդյունք՝ միաժամանակ նշում է գերմ. (նորվ. *kvata*, վեստֆալ. *kwatern* «շաղակրատել») ու իրանական (ավեստ., հ. պրսկ. *Jad* - «խնդրել») զուգահեռներ և ենթադրում է *gued-* արմատ: Բոլոր դեպքերում հայերենի իմաստը հենու է մնում»¹¹:

Ռապանուներենում՝ *kata*, *katakata* - ծիծաղ; *kakata* - ցածրաձայն ծիծաղել, *katakata* - բարձրաձայն ծիծաղել, *hakakata*, *hakakatakata* - ծիծաղեցնել:

⁸ ՀԱԲ, հ. II, էջ 163:

⁹ Նույն տեղում, էջ 178:

¹⁰ Т. В. Гамкрелдзе, Вяз. В. Ивон, 2011, 758:

¹¹ Գ. Բ. Ջահուկյան, 2011, 172: Գ. Ջահուկյանը հարցականով է նշում **gued*-նախաձևը (էջ 129-ի ցանկում):

Ակնհայտ է, որ թե՛ հնչյունական, թե՛ իմաստային տեսակետից բառն առավել մերձակից է հայերենին:

10) *Թուր* բառի մասին Հր. Աճառյանը գրում է. «Բնիկ հայ բառ. – հնիս. արմատն է *spieu*, որից ծագում են լա. *spuo*, իաալ. *sputare*, գոթ. *speiwan*, հիւլ. *spyja...*, գերմ. *speien*, անգլ. *spew*, հոլ. *spuwen*, լեհ. *spiauja*, լեհ. *pluje*, ռուս. *плевать, плюнуть*, բոլորն էլ «թքնել» իմաստով»¹²: Բստի ասիական զուգահեռներից նշվում են մասնավորապես պոսկ. *tuf*, օսս. *tu*, քրդ. *tu*, *taw*, *tiw*, *tef*, *tuk*, աֆղան. *tu*, *tuk* և այլ ձևեր: Գ. Ջահուկյանը թուրք բստի մասնաձև համարում է **thu-ko*-ձևը:¹³

Ռապամուներում՝ *tugu* - 1) հարբուխ, 2) մրսել, հազալ: *tugutugu* (*tugu-tugu*) - 1) ասթմա, 2) մրսել, հազալ, *tuke gao* – վիզ, ըմպան, կերակրափող (մեր կարծիքով, բառակապակցության երկու բաղադրիչները մման են հայերեն *թուր* և *զալ* բառերին, և այն բառացիորեն նշանակում է «թուր զալ», ինչը իմաստային տեսակետից չի հակասում «վիզ, ըմպան, կերակրափող» իմաստներին):

11) *Մատաղ* բառի մասին Գ. Ջահուկյանը համարում է հնիս. **mad* - արմատը, իսկ «բառիմաստային (թեմատիկ) խմբեր» բաժնում նշում է «մատղաշ» իմաստը: Ռապամուներում՝ *matshi* – 1) հասակ, 2) ժամանակաշրջան, դար, 3) սերունդ: Կարծում ենք, որ *հասակ* և *սերունդ* իմաստները մերձավորագույն կապ ունեն հայերեն մատաղ բառի հետ (հիշենք *մատաղ սերունդ*, *մատաղ հասակ* բառակապակցությունները):

12) Հուր – (գրծ. մաև հուրը) «կրակ»...«կրակե, հրեղեն», որտեղից՝ հրացեալ, հրագոյն, հրալից, հրայրեաց, հրայրք, հրծիզ, հրատ, հրկեզ, անհուր և այլն, բնիկ հայ բառ՝ հնիս. *puro* – ձևից:¹⁴

Ըստ Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի, բառը ծագում է հնդեվրոպական **p^hh₂hur* ձևից և տարբեր լեզուներում թողել է իր հոմանիշները, իսկ. *pahhur*, թոխ. Ա. *por*, թոխ. B. *puwar*, հայ. *hur*, սեռ. հոլ. *hroy* «կրակ», հուն. *πῦρ* «կրակ», ումբր. *pir* «կրակ», հին.իսլ. *furr* «կրակ», գոթ. *fiōn*, հին անգլ. *fyr* «կրակ», անգլ. *fire*, հին. գերմ. *fuir*, գերմ. *Feuet*, պրուս. *panno* «կրակ»¹⁵:

Ռապամուներում այս արմատը շատ է տարածված.

ա) *ura* - 1. 1) կրակ, հուր, կայծակ, 2) այրվելը, 2. 1) կրակով բռնված լինել, 2) մոլեգնել (կրակի, քամու մասին), *ura xhi* – հուր, բոց, կրակի լեզուներ, *ura herohero* – կրակի բռնկումը, բ) *uero*, *huero* (u-ero, hu-ero) - 1. 1) աստղ, գիսաստղ, 2) ճառագայթ, 3) մթնշաղ, աղջամուղջ, վերջալույս, 2. լինել ճառագայթող, գ) *herohero* (*hero-hero*) - 1. 1) պայծառ, 2) մորեգույն, կարմիր, 3) դաժան, 2. հասուն պտղի գույն, դ) *hueroero* - ճառագայթ, ե) *huero veravera* – կիզիչ, այրող ճառագայթ: Նշենք, որ բառակապակցության երկրորդ՝ *veravera* բաղադրիչը և՛ հնչյունական, և՛ իմաստային տեսակետից մման է հայերեն վառ -ել, -ող արմատին, գ) *uraura* (*ura-ura*) - 1. պայծառ կարմիր, 2. այգ, է) *uri-uri* 1) սև, 2) շատ մութ, մթին, խավար, 3) դարչնագույն, 4) մոխրագույն, 5) կանաչ, 6) կապույտ, 7) երկնագույն, 8) մանիշակագույն, ը) *uru* - փայտիկներ, որոնցով կրակից հանում են շիկացած քարերը, թ) *huri* – խառնադրան (հրաբխի), ժ) *hu*, *ura*, *vera* – կրակ,

¹² ՀԱԲ, հ. II, էջ 212:

¹³ Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 151:

¹⁴ ՀԱԲ, հ. III, էջ 125:

¹⁵ Т. Гамкрелдзе, Вяч. Вс. Иванов, նշվ. աշխ., էջ 125:

րոց (ենթադրում ենք, որ vera-ն դարձյալ հայերեն «վառ» արմատն է), ժա) *ure íahiri* - ճառագայթ, կայծակ, ժր) *uri*- 1. խավար (մթին), րաց մանիշակագույն, մանիշակագույն, կանաչ, 2. կանաչել, ժազել, ժզ) *ahi, hahi, vahi* – կրակ, լույս, ժդ) ռապանուներենում (հավայերենում նույնպես) *ahi* բառը նշանակում է «կրակ», իսկ *ahiahi (ahi-ahi)*՝ «երեկո»։ Այնհայտ է, որ վերջինս կազմված է *ahi* արմատի կրկնությամբ։ Սեր կարծիքով, այն նշանակում է օրվա այն ժամանակահատվածը (երեկո), երբ վառում են կրակները, և այս տեսակետից համեմատելի է հայերեն «ճրագալույց» բառի հետ, որի բառացի իմաստն է՝ «ճրագները վառելու ժամանակը», ժե) *ahi* - երեկոյանալ, ժզ) *ure* - 1) ճառագայթ, կայծակ, 2) երկնաքար (մետեորիտ)։

Պոլինեզիական սրբաբանները կոչվում են *ahur*։ Կործում ենք, այն նույնպես «ձուր» արմատն է և մախապես ունեցել է ոչ թե «սրբաբան», այլ «կրակաբան» իմաստը։

ЛЕКСИЧЕСКИЕ СХОДСТВА МЕЖДУ АРМЯНСКИМ И ПОЛИНЕЗИЙСКИМИ ЯЗЫКАМИ

Л. Г. СТЕПАНЯН

Р е з ю м е

Между армянским и рапануйским языками обнаруживаются формально-смысловые сходства: арм. *tovel* "заклинать" — рап. *tohu* "заклинание"; арм. *kar* "камень", *karair* "пещера"- рап. *karava* "пещера"; арм. *hip* "старый", "старинный"- рап. *hinihihi* "древний", "старинный", арм. *ti*, (*tiak*) "весло" — рап. *tiaki* "бороздить", "разрезать волны", *tatia* "балансир старинных лодок"; арм. *tir* "полет"- рап. — *turi* "птица"; арм. *tev* "крыло" — рап. *tuvi* "птица"; арм. *urur* "коршун" — рап. *ugu* "коршун"; арм. *tav* "густой", "пышный" (о растениях) — рап. *toutou* "пышный", "густой" (о растениях); арм. *tekel* "свернуть", "сворачивать" (*tekum* - поворот) — рап. *teka* "крутиться", "витья" (о дороге); арм. *kip* "женщина" — рап. (таит., гав.) *vahipe, hahipe* "женщина"; арм. *katak* "шутка"- рап. *kata* "смех, смеяться"; арм. *mataγ* "юный" — рап. *matahi* "поколение", "возраст"; арм. *hur* (огонь) — рап. *huri, uri, uga, uge, uero, huego, huegoero* и т. д. со значениями, тождественными (и/или близкими) огню, пламени: "огонь, пламя, луч, лучистый, красный, воронка, рассвет, молния, звезда, комета, горение, бушевать (об огне), лиловый, ярко-красный, метеорит. Сходства эти интересны тем, что соотносимые языки принадлежат к разным языковым группам (армянский-индоевропейской, а рапануйский - австронезийской), не имеющим исторически смежных ареалов.